Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2023 թվականի օգոստոսի 4-ի N282-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2023 թվականի օգոստոսի 14-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33 , 060 27 33 33 հեռախոսահամարներով:

Արցախի հանրապետության առանձին շրջաններից ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվող հիփոթեքային վարկի տեղեկատվական ամփոփագիր			
1.	**Հիմնական պայմաններ**		
1.1	**Ծրագիր**	ԲԵ	ԱՀԸ
1.2	***Վարկի նպատակ***	*Արցախի հանրապետության առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում ՀՀ-ում բնակելի անշարժ գույքի ձեռքբերում*	
1.3	***Վարկի արժույթ***	ՀՀ դրամ	
1.4	***Վարկի նվազագույն գումար***	Չի սահմանվում	
1.5	***Վարկի առավելագույն գումար***	22,500,000	Մինչև 35,000,000[1]
1.6	***Պետության կողմից ամբողջությամբ սուբսիդավորվող վարկի առավելագույն գումար***	8,000,000 ՀՀ դրամ Երևանում հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու համար	
		10,000,000 ՀՀ դրամ ՀՀ մարզային բնակավայրում հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու համար	
		12,000,000 ՀՀ դրամ ՀՀ առանձին գյուղական բնակավայրում հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու համար	
		14,000,000 ՀՀ դրամ ՀՀ սահմանամերձ բնակավայրում հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու համար	

[1] Էներգաարդյունավետ անշարժ գույքի ձեռքբերման դեպքում վարկի առավելագույն գումար 45 000 000 ՀՀ դրամ

1.7	***Վարկի ժամկետ***	120 ամիս	
1.8	***Տարեկան անվանական տոկոսադրույք***	**Հաստատուն տոկոսադրույք՝** ամբողջ ժամանակահատվածի համար	
		10%	10%-13%[2]
1.9	***Տարեկան փաստացի տոկոսադրույք[3]***	10.53%-10.66%	10.53%-14.01%
1.10	***Նվազագույն կանխավճար***	10% Երևանում հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում	
		2.5% ՀՀ մարզային բնակավայրում հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում	
		1% ՀՀ սահմանամերձ բնակավայրում հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու դեպքում կամ, եթե ծրագրի շահառուն ունի առնվազն 4 անչափահաս երեխա կամ հավաստագրում ներառված ընտանիքի բոլոր անդամների 65 տարին լրացած է	
1.11	***Ապահովություն (գրավ)[4]***	Ձեռքբերվող անշարժ գույք[5]	
1.12	***Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն***	90% – Երևանում 97.5% – ՀՀ մարզային բնակավայրում 99% – ՀՀ սահմանամերձ բնակավայրում կամ, եթե ծրագրի շահառուն ունի առնվազն 4 անչափահաս երեխա կամ հավաստագրում ներառված ընտանիքի բոլոր անդամների 65 տարին լրացած է	
1.13	***Վարկի տրամադրման եղանակ***	միանվագ անկանխիկ՝ ընթացիկ հաշվի միջոցով	
1.14	***Վարկի և տոկոսագումարների մարման եղանակ***	**Անուիտետային՝** վարկի մայր գումարի և տոկոսագումարի հանրագումարի ամսական հավասարաչափ մարումներ	
1.15	***Վարկային հայտի ուսումնասիրության վճար***	Չի սահմանվում	

[2] Երևանում և ՀՀ մարզային բնակավայրերում հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռքբերելու համար – 10%, ՀՀ առանձին գյուղական բնակավայրերում հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռքբերելու համար – 12%, ՀՀ սահմանամերձ բնակավայերում հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռքբերելու համար – 13%

[3] ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

[4] Կախված հաճախորդի վարկունակությունից կարող է պահանջվել այլ անշարժ գույք

[5] Ձեռքբերվող անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքների նկատմամբ սահմանափակումներ չկան 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո ձեռք բերվող անշարժ գույքը չպետք է հանդիսացած լինի շահառու ընտանիքի որևէ անդամի սեփականությունը, այդ թվում՝ բաժնային սեփականությունը.

1.16	***Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար***	Չի սահմանվում	
1.17	***Բանկային հաշվի բացում***	Համաձայն Բանկի գործող սակագների	
1.18	***Գրավի ձևակերպման համար կատարվող վճարներ***	Իրականացվում է հաճախորդի կողմից	
1.19	***Ապահովագրություն***	Իրականացվում է Բանկի կողմից վարկի մնացորդային գումարի չափով, որի մեջ չի ներառվում պետության կողմից սուբսիդավորվող գումարը	
1.20	***Վարկունակության գնահատում***	OTI-45%[6]	
1.21	***Վարկի գումարի և կանխավճարի կանխիկացման միջնորդավճար***	չի սահմանվում	
1.22	***Գրավատու***	• ձեռք բերվող անշարժ գույքի դեպքում՝ վարկառուն և/կամ համավարկառուն, ինչպես նաև գույքի սեփականատեր հանդիսացող բոլոր չափահաս անձինք • այլ անշարժ գույքի (այլ գրավի) դեպքում՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ	
1.23	***Վարկառու***	ԱՀ առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շահառու	
1.24	***Համավարկառու***	ԱՀ առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շահառու կամ վերջինիս ընտանիքի ցանկացած չափահաս անդամ[7]	
1.25	***Այլ պայմաններ***	Պետության կողմից տրամադրվող աջակցության գումարի վրա չեն տարածվում «Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքներին» ծրագրի հետևյալ սահմանափակումները. • Ամուսինների տարիքների գումարը գերազանցում է 70-ը, կամ երեխա ունեցող երիտասարդ միայնակ ծնող, ում տարիքը գերազանցում է 35-ը (ներառյալ) • Վարկառուի և համավարկառուի ընդհանուր ամսական զուտ եկամտի հանրագումարը գերազանցում է 800,000 ՀՀ դրամը • Ամուսիններից որևէ մեկն ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող այլ բնակելի անշարժ գույք • Ամուսինները չեն պատրաստվում մշտական բնակության անցնել ձեռքբերվող բնակարանում կամ բնակելի տանը •	-
1.26	***Վարկառուի/համավարկառուի և անշարժ գույքը վաճառողի միջև կապը***	Անշարժ գույքը չի կարող ձեռք բերվել այն ֆիզիկական անձից, ով հանդիսանում է վարկառուի/համավարկառուի ընտանիքի անդամ, մասնավորապես՝ վարկառուի/համավարկառուի հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողը, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխան, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխան	

[6] Կիրառվում է, եթե վարկի գումարը և/կամ վարկի տոկոսագումարը գերազանցում է պետության կողմից տրամադրվող աջակցության /սուբսիդավորման/ գումարը

[7] Ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները: Սույն կետով սահմանված ընտանիքի անդամները ծրագրի շրջանակներում կարող են հանդիսանալ ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր շահառու ընտանիքների անդամներ: Սակայն ընտանիքի միևնույն անդամը կարող է հանդիսանալ միայն մեկ շահառու ընտանիքի անդամ:

1.27	***Վարկառուի/ համավարկառուի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ***	1. վարկային պատմության բացակայություն
		2. վարկի ստացման դիմումի ներկայացման օրվա դրությամբ ֆինանսաբանկային համակարգի նկատմամբ ժամկետանց, ինչպես նաև գործող դասակարգված պարտավորությունների բացակայություն (վարկի, վարկային գծի, օվերդրաֆտի, տրամադրված երաշխավորության և այլնի գծով)
		3. վարկի ստացման դիմումի ներկայացման օրվան նախորդող 12 ամիսների ընթացքում նախկինում ստացված վարկերի (վարկային գիծ, օվերդրաֆտ, տրամադրված երաշխավորություն և այլն) գծով վարկի մայր գումարի և/կամ տոկոսագումարների մարումների ոչ ավել, քան 30 ուշացած օրերի հանրագումար[8]
		4. հաճախորդը չպետք է ներառված լինի Բանկի անցանկալի հաճախորդների ցանկում[9]
1.28	***Մնացած պայմանները***	համաձայն «Անշարժ գույքի ձեռքբերման նպատակով տրամադրվող հիփոթեքային վարկերի» տեղեկատվական ամփոփագրի

[8] Կիրառվում է, եթե վարկի գումարը և/կամ վարկի տոկոսագումարը գերազանցում է պետության կողմից տրամադրվող աջակցության /սուբսիդավորման/ գումարը

[9] Բանկի անցանկալի հաճախորդ դասակարգելու վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորվում են «Բանկի կողմից հաճախորդին անցանկալի դասակարգելու չափանիշները սահմանելու և նրանց հետ հարաբերությունների կառավարման վերաբերյալ» ընթացակարգով - https://idbank.am/information/helpfull-information/Classification_procedure.pdf

1. Արցախից տեղահանված ընտանիքներին տրամադրվող պետական աջակցության շրջանակներում նախքան հիփոթեքային վարկի համար դիմելը հաճախորդը դիմում է ներկայացնում Միասնական Սոցիալական Ծառայությանը և ծրագրի շահառու լինելու մասին դրական որոշման դեպքում՝ ստանում համապատասխան Հավաստագիր , որն անհրաժեշտ է ներկայացնել հիփոթեքային վարկի համար դիմելիս:
2. Ընտանիքի անդամները կարող են միավորել Հավաստագրերը (առավելագույնը 3 Հավաստագիր) համատեղ բնակելի անշարժ գույք ձեռք բերելու նպատակով, որի դեպքում աջակցության չափը սահմանվում է միավորված Հավաստագրերի քանակին համապատասխան:
3. Պետության կողմից աջակցությունը տրամադրվում է հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք ձեռք բերելու համար և ուղղվում է բացառապես աջակցության գումարի շրջանակներում հիփոթեքային վարկի ամենամսյա վճարումների՝ մայր գումարի և տոկոսագումարի մարմանը: Պետության կողմից հաճախորդին փոխհատուցվում է նաև սեփականության իրավունքի գրանցման համար վերջինիս կողմից կատարած ծախսերը:
4. Երևան քաղաքում բնակելի անշարժ գույքի ձեռքբերման համար աջակցությունը տրամադրվում է բացառապես այն անձանց և նրանցից սերված ընտանիքներին, ովքեր նախքան Արցախի Հանրապետությունում բնակվելը հաշվառված են եղել Երևանում:
5. ՀՀ մարզային/սահմանամերձ բնակավայրերում բնակելի անշարժ գույքի ձեռքբերման համար աջակցությունը տրամադրվում է բացառապես այն անձանց և նրանցից սերված ընտանիքներին, ովքեր նախքան Արցախի Հանրապետությունում բնակվելը հաշվառված չեն եղել Արցախի Հանրապետությունում:
6. Ձեռքբերվող բնակելի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվում է հաճախորդի /ծրագրի շահառուի/ ընտանիքի՝ ՀՀ քաղաքացիություն ունեցող և Հավաստագրում ներառված բոլոր չափահաս անդամների անունով:
7. Եթե հիփոթեքային վարկի գծով ամսական վճարները (մայր գումար և տոկոսագումար) գերազանցում են պետության կողմից տրամադրված աջակցության /սուբսիդավորման/ գումարի սահմանաչափերը, ապա սույն հիփոթեքային վարկի ժամանակացույցով սահմանված ամսական վճարների և սուբսիդավորման գումարի տարբերությունը վճարվում է հաճախորդի կողմից.
8. Պետական աջակցության դադարեցման/վերադարձման դեպքերը.
    1) Հիփոթեքային վարկի ամբողջական մարման դեպքում դրամական աջակցության վճարումը դադարում է ամբողջությամբ, այդ պահի դրությամբ վճարված պետական աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման պետությանը:
    2) Հիփոթեքային վարկի գործողության ընթացքում բնակելի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձանց (բացառությամբ ընտանիքի անդամների) անունով գրանցելու դեպքում դրամական աջակցության վճարումը դադարում է ամբողջությամբ, այդ պահի դրությամբ վճարված պետական աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման պետությանը:
    3) Հիփոթեքային վարկի գործողության ընթացքում վարկառուի մահվան դեպքում դրամական աջակցության վճարումը դադարում է ամբողջությամբ, եթե վարկառուի ժառանգը չի հանդիսանում վերջինիս ընտանիքի անդամ, այդ պահի դրությամբ վճարված պետական աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման պետությանը:
    4) Հիփոթեքային վարկի գործողության ընթացքում վարկառուի/համավարկառուի կողմից կատարվող ամսական վճարումների շրջանակներում 90 օրվանից ավել ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում (պետության կողմից տրամադրվող աջակցության չափից ավել տրամադրվող գումարի համար) դրամական աջակցության վճարումը դադարում է ամբողջությամբ, այդ պահի դրությամբ վճարված պետական աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման պետությանը:

5) Հիփոթեքային վարկի գործողության ընթացքում բնակելի անշարժ գույքը օտարելու դեպքում պետական աջակցության գումարները ենթակա են վերադարձման պետությանը՝ փոխհամաձայնեցված եղանակով կամ դատական կարգով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բանկը, նախքան վարկային պայմանագրի կնքումը, հաճախորդին տրամադրում է վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված են հաճախորդին տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:

2. Բանկը պարտավոր է հաճախորդին տրամադրել հիփոթեքային վարկի առաջարկը պայմանագրի կնքման օրվանից առնվազն յոթ օր առաջ և հաճախորդին ընձեռել հնարավորություն մտածելու և վերջնական որոշում կայացնելու համար:

3. Վարկառուն իրավունք ունի պայմանագրով սահմանված իր պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն ժամկետից շուտ կատարելու՝ նախատեսված լինելու դեպքում վճարելով նաև տուգանք:

4. Վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում է վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի եկամուտը ձևավորող վճարները:

5. Հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

6. Անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով: Գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, հիփոթեքի իրավունքը և այլ գույքային իրավունքները ենթակա են պետական գրանցման:

7. Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:

8. Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը հաճախորդի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

9. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ուղեցույց:

10. Արտարժույթով վարկերի դեպքում փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է ընդունվում վարկի տրամադրման պահին ՀՀ ԿԲ պաշտոնական կայք-էջում հրապարակված փոխարժեքը: Փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել կախված ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

11. Արտարժույթով վարկերի դեպքում վարկի մայր գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարները վարկառուի ցանկությամբ կարող են վճարվել նաև վարկի արժույթով:

12. Արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

13. Տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամանակին չկատարելու դեպքում գրավադրված գույքը և/կամ դրամական միջոցները կարող են օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, իսկ հաճախորդի մասին տեղեկատվությունը Բանկը առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է հաճախորդի վարկային պատմությունը: Հաճախորդը իրավունք ունի վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել իր վարկային պատմությունը:

14. Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել հաճախորդին՝ ապագայում վարկ ստանալու համար:

15. վարկառուն կարող է զրկվել գույքի (բնակարանի կամ տան) նկատմամբ իր իրավունքներից, եթե չկատարի կամ ոչ պատշաճ կատարի վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

16. Հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելիս գրավը բավարար չլինելու դեպքում հնարավոր է պարտավորությունների մարում հաճախորդի այլ գույքի հաշվին:

17. Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ գումարի բռնագանձման ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում), տոկոսների տուժանք, վարկի մայր գումարի տուժանք, տոկոսներ, սպասարկման վճար և միջնորդավճարներ /առկայության դեպքում/ և վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը:

18. Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70-11-11, ֆաքս՝ (+37410) 58-24-21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

19. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

20. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

21. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

22. Վարկային պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման պայմաններին կարող եք տեղեկանալ հետևյալ հղմամբ՝ Սակագների:

23. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ Մասնաճյուղեր և բանկոմատներ:

24. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBanking.am առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ